ՎԱՍԻԼԻ ՇՈՒԿՇԻՆ

1929-1974



Վասիլի Շուկշինը ծնվել է 1929թ. հուլիսի 29-ին Ալթայի երկրամասի գյուղերից մեկում՝ գեղջկական ընտանիքում: Նրա մանկության հուշերը կապված են չքավորության, կարիքի ու դժվարությունների հետ: 1933թ.հորն անհիմն մեղադրում ու գնդակահարում են, երբ որդին ընդամենը 4 տարեկան էր: Այնուհետև ժողովրդի թշնամու ընտանիքի անդամներին տնից զրկելու որոշում է լինում, սակայն համարձակ մորը հաջողվում է դիմադրել որոշման կատարմանը, և իշխանավորներն ի վերջո տեղի են տալիս: Հետագայում Վասիլին վերցնում է մոր ազգանունը, որպեսզի կարողանա խույս տալ ժողովրդի թշնամու զավակի խարանից: Միայն տարիներ անց, երբ մահվան դատապարտված անմեղ մարդիկ արդարացվում են, Վասիլին վերադառնում է Շուկշին ազգանվանը: Երբ Վասիլին հեռանում է ծննդավայրից ու գնում Մոսկվա, սովորում, դառնում ռեժիսոր ու դերասան, ֆիլմերում խաղում վառ ու հիշվող դերեր, միևնույն է, երբեք չի մոռանում անցյալն ու իր մեջ կենդանի է պահում գյուղում մեծացած հասարակ, աշխատասեր ու ազնիվ մարդուն: Հետագայում նրա գրքերի ու ֆիլմերի գլխավոր հերոս դառնում են հենց նման մարդիկ:

Շուկշինը դպրոցն ավարտում է ավելի ուշ՝ էքստեռն քննություններով, իսկ մինչ այդ փորձում է արհեստ ձեռք բերել: Գալիս է նաև ծառայելու ժամանակը. նա զինակոչվում է բանակ ու ծառայում ռազմածովային նավատորմում, որից հետո վերադառնում է հարազատ գյուղ, աշխատում դպրոցում որպես լեզվի ուսուցիչ, որոշ ժամանակ էլ՝ որպես նույն դպրոցի տնօրեն: 1954 թ. Շուկշինը որոշում է գնալ Մոսկվա և կրթություն ստանալ այնտեղ: Տղայի մեկնելու և մայրաքաղաքում ապրելու գումար ապահովելու համար մայրը վաճառում է իրենց կովը: Մայրաքաղա-

քում Վասիլին 4 տարի սովորում է կինոյի ինստիտուտի ռեժիսուրայի բաժնում: Ավարտում է 1960թ. դիպլոմային աշխատանքով՝ ֆիլմով. իր դիպլոմային աշխատանքի ռեժիսորն ու գլխավոր դերակատարն ինքն էր: Աշխատանքը հավանության է արժանանում ու շատ մեծ արձագանք ունենում: Դրան հետևում են լուրջ դերերի բազմաթիվ առաջարկներ:

Շուկշինը գրել սկսել է դեռևս բանակում ծառայելու տարիներին: Նրա առաջին ընթեցողներն իր ծառայակից ընկերներն էին: Ուսման տարիներին նույնպես շարունակում է գրել ու երկերն ուղարկել մայրաքաղաքային հրատարակչություններ և թերթերի խմբագրություններ: 1958թ. ամսագրերից մեկում առաջին անգամ տպագրվում են նրա ստեղծագործությունները: Դա մեծ հաջողություն էր, որին հաջորդում է առաջին դերը ֆիլմում:

Վ. Շուկշինը տաղանդավոր մարդ էր, նրան հաջողվեց կայանալ որպես գրող, դերասան, ռեժիսոր ու բեմագրերի հեղինակ: Նրա գրքերն ու խաղացած դերերը թվարկելն այնքան էլ հետ չէ: Շատ հայտնի ռեժիսորներ ֆիլմեր են նկարահանել հենց նրա ստեղծագործությունների թեմաներով: Շուկշինի համար շատ բեղմնավոր էին հատկապես 1972-1974 թվականները, երբ նրա բեմագրերով ֆիլմեր էին նկարահանվում, և հենց ինքն էր հրավիրվում գլխավոր հերոսի դերում:

Շուկշինի կյանքի թելը կտրվեց 45 տարեկանում՝ հերթական նկարահանումների օրերին. նա նորից կարևոր դերերից մեկում էր:

Տարիներ են անցել, բայց Շուկշինի արվեստին հավատարիմ հանդիսատեսը դեռ դիտում է նրա ֆիլմերն ու հիանում նրա տաղանդով:

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԸ

Թարգմանությունը՝ Արմեն Հովհաննիսյանի

«Մամա, ոչինչ էլ չի լինի: Ջահել օրերդ հիշիր, վեր կաց, արի: Մոսկվան էլ կտեսնես, ուրիշ բաներ էլ: Ճամփի ծախսը կուղարկեմ: Մենակ թե, լավ կլինի, ինքնաթիռով գաս, էժան կնստի: Հեռագիրը շուտ տուր, որ իմանամ, թե երբ եմ դիմավորելու: Ամենակարևորը՝ չվախենաս»:

Մալանյա տատը կարդաց, չորացած շրթունքները հավաքեց, ծգեց, մտքերի մեջ ընկավ:

— Պավելս իրա մոտ ա կանչում,— ասաց Շուրկային ու նրան նայեց ակնոցի վրայից: (Շուրկան Մալանյա տատի թոռն է, աղջկա որդին: Աղջկա անձնական կյանքը չէր դասավորվում (երրորդ անգամ ամուսնացավ), տատը համոզեց առայժմ իր մոտ թողնել Շուրկային: Թոռանը սիրում էր, բայց երես չէր տալիս):

Սեղանի մոտ նստած, Շուրկան դաս էր սովորում: Ի պատասխան տատի ասածի, ուսերը թոթվեց՝ որ կանչում է, գնա:

— Արձակուրդդ ե՞րբ ա,— խստորեն հարցրեց տատը:

Շուրկան ականջները սրեց:

— Ո՞ր: Ձմեռայի՞ն:

— Էլ ո՞ր, բա ամառայի՞ն:

— Հունվարի մեկից: Ինչի՞ որ:

Տատը նորից շրթունքները հավաքեց, ծգեց՝ մտքերի մեջ ընկավ:

Իսկ Շուրկայի սիրտը հուզմունքից և ուրախությունից թրթռաց:

— Ինչի՞ որ,— մի անգամ էլ հարցրեց նա:

— Հե՛չ: Դասերդ արա:— Տատը նամակը դրեց գոգնոցի գրպանը, հագնվեց ու խրճիթից դուրս ելավ:

Շուրկան մոտ վազեց լուսամուտին, տեսնելու, թե ուր գնաց տատը:

Մալանյա տատը դարպասի մոտ հանդիպեց հարևանուհուն և սկսեց բարձրաձայն պատմել:

— Պավելս ղոնախ ա կանչում իրա մոտ, Մոսկվա: Շվարել, մնացել եմ: Խելքս բան չի կտրում: «Մամա, վեր կաց, արի,– ասում ա,— շատ ու շատ կարոտել եմ»:

Հարևանուհին ինչ-որ բան ասաց: Շուրկան պատասխանը չլսեց, իսկ տատը բարձրաձայն շարունակեց:

— Ինչ ասեմ, կարելի ա գնալ: Թոռներիս ոչ մի անգամ չեմ տեսել, մենակ նկարներով գիտեմ: Համա շատ եմ վախենում, շատ...

Երկու կին կանգ առան նրանց մոտ, հետո մեկն էլ մոտեցավ, մեկ ուրիշն էլ... Շուտով Մալանյա տատի շուրջ ահագին ժողովուրդ հավաքվեց, և նա նորից ու նորից էր սկսում պատմել:

— Պավելս իրա մոտ ա կանչում Մոսկվա: Շվարել, մնացել եմ...

Երևում էր, որ բոլորն էլ նրան խորհուրդ էին տալիս գնալ:

Շուրկան, ձեռքերը գրպանները դրած, քայլում էր խրճիթում: Դեմքի արտահայտությունը երազկոտ էր և մտախոհ՝ տատի նման: Ընդհանրապես, նա շատ նման էր տատին. լղարիկ, այտոսկրերը դուրս պրծած, նույնպիսի մանրիկ ու խելացի աչքերով: Բայց բնավորությամբ ամենևին նման չէր: Տատը եռանդուն էր, ջլուտ, ճղճղան, շատ հետաքրքրասեր: Շուրկան էլ էր հետաքրքրասեր, բայց հիմարության աստիճան ամաչկոտ: Համեստ ու խռովկան:

Երեկոյան Մոսկվա ուղարկվելիք հեռագիրն էին կազմում: Շուրկան գրում էր, տատը թելադրում:

— Թանկագին որդի Պաշա, եթե որ դու ուզում ես, որ ես գամ, ինչ ասեմ, ես կարող եմ գամ, մենակ թե էս տարիքիս...

— Չեղավ,— ասաց Շուրկան:— Էսպես ո՞վ է հեռագիր տալիս:

— Քո ասելով ո՞նց են տալիս:

– Կգանք: Վերջակետ: Կամ էսպես՝ կգանք Նոր տարուց հետո: Վերջակետ: Ստորագրությունը՝ մամա: Վերջ:

Տատը նույնիսկ նեղացավ:

– Վեցերորդ դասարան էլ հասար, չխելոքացար: Մի քիչ խելք հավաքիր, էլի, Շուրկա:

Շուրկան նույնպես նեղացավ:

– Ոնց կուզես,— ասաց նա:— Էսպես գիտե՞ս ինչքանի կգրենք: Հին փողով մի քսան ռուբլու:

Տատը շրթունքները հավաքեց, -ձգեց, մտածեց:

– Լավ, գրի էսպես. որդի, մի քանիսի հետ էստեղ խորհուրդ արեցի...

Շուրկան գրիչը ցած դրեց:

– Էսպես չի լինի: Ում ինչ գործն է, թե էստեղ մի քանիսի հետ խորհուրդ ես արել: Փոստում վրաներս կծիծաղեն:

– Քեզ ոնց ասում են, էնպես էլ գրի,— հրամայեց տատը:– Տղիս համար քսան ռուբլի պիտի խնայեմ, հա՞:

Շուրկան գրիչը վերցրեց և, ներողամտորեն դեմքը կնճռոտելով, գլուխը կախեց:

– Թանկագին որդի Պաշա, հարևաններիս հետ խոսեցի, բոլորն էլ ասում են, որ գամ: Ինչ ասեմ, էս տարիքիս մի քիչ վախենալի...

– Մեկ է, փոստում կփոխեն,— ընդհատեց Շուրկան:

– Մենակ թող փորձվեն:

— Չես էլ իմանա:

– Գրի, գրի. ճիշտն ասեմ, մի քիչ վախենալի ա, բայց դե... լավ: Կգանք Նոր տարուց հետո: Վերջակետ: Շուրկայի հետ: Արդեն մեծացել ա: Ոչինչ, լսող տղա...

Շուրկան բաց թողեց այդ բառերը, թե ինքը մեծացել ու լսող տղա է դարձել:

— Նրա հետ էնքան էլ վախենալի չի լնի: Ուրեմն, որդի, ցտեսություն, ես էլ ձեզ շատ գեշ...

Շուրկան գրեց «ահավոր»:

— ...կարոտել եմ: Գոնե երեխեքիդ կտեսնեմ: Վերջակետ: Մամա:

— Հաշվենք,— չարախնդությամբ ասաց Շուրկան և, գրչածայրը բառերի վրա տանելով, սկսեց կիսաձայն համրել.— մեկ, երկու, երեք, չորս...

Թոռան ետևը կանգնած, տատը սպասում էր:

— Հիսունութ, հիսունինը, վաթսուն: Չէ՞: Վաթսունը բազմապատկենք երեսունով՝ հազար ութ հարյո՞ւր: Չէ՞: Բաժանենք հարյուրի՝ կստանանք տասնութ... Մոտ քսան ռուբլու, մի քիչ էլ ավել,— հանդիսավոր հայտարարեց Շուրկան:

Տատն առավ հեռագիրն ու դրեց գրպանը:

– Ինքս կտանեմ փոշտ: Հաշվապահիս տեսեք:

– Ոնց կուզես: Նույն բանը կասեն: Կարող է մի քանի կոպեկ սխալված լինեմ:

... Ժամը տասնմեկի մոտ նրանց տուն եկավ հարևանը՝ դպրոցի տնտեսվար Եգոր Լիզունովը: Տատն էր խնդրել նրա տնեցիներին, որ աշխատանքից հետո իր մոտ ուղարկեն: Եգորը շատ տեղեր էր գնացել-եկել, ինքնաթիռով՝ նույնպես:

Եգորը հանեց կիսամուշտակը, գլխարկը, կոշտացած ափերով հարթեցրեց ճերմակող, քրտնած մազերը: Նստեց սեղանի մոտ: Սենյակը խոտի և լծասարքի հոտ բռնեց:

— Ուրեմն, ուզում եք ինքնաթիռո՞վ:

Տատն իջավ նկուղ, մի աման տնական գարեջուր հանեց:

– Հա, Եգոր: Ամեն բան հերթով պատմի՝ որտեղ, ոնց:

– Պատմելու ինչ կա՞ որ:— Եգորը ոչ թե ագահաբար, այլ ասես նույնիսկ մի քիչ էլ ներողամտաբար էր նայում, թե տատն ինչպես է գարեջուր լցնում:— Կհասնեք քաղաք, կնստեք Բիյսկ--Տոմսկ գնացքը, սա ձեզ կտանի Նովոսիբիրսկ, իսկ էնտեղ կհարցնեք, թե քաղաքային օդակայանի տոմսարկղն ուր է: Կարելի է միանգամից օդակայան գնալ...

– Համբերի: Մի գլուխ՝ կարելի ա, հա՛, կարելի ա: Դու ասա, թե ոնց ա պե՛տք, ոչ թե ոնց ա կարելի: Ու վրա մի տուր: Ամեն բան խառնեցիր իրար:— Տատը գարեջրի գավաթը դրեց Եգորի դիմաց, խստորեն նրան նայեց:

Եգորը մատները դիպցրեց գավաթին, շոյեց:

— Հա՛, ուրեմն, կհասնեք Նովոսիբիրսկ ու տեղնուտեղը կհարցնեք, թե ոնց գնաք օդակայան: Շուրկա, միտդ պահիր:

— Շուրկա, գրի՛,— հրամայեց տատը:

Շուրկան տետրից մաքուր թերթ պոկեց ու սկսեց գրել:

— Կհասնեք Տոլմաչևո, էնտեղ էլ կհարցնեք, թե որտեղ են ծախում Մոսկվայի տոմսերը: Տոմսերը կառնեք, կնստեք ՏՈԽ-104 ու հինգ ժամ հետո կլինեք Մոսկվայում, մեր հայրենիքի մայրաքաղաքում:

Գլուխը հենած փոքրիկ, չորչորուկ բռունցքին, տատը դառնացած լսում էր Եգորին: Որքան շատ էր խոսում հարևանը և որքան ավելի հեշտ էր թվում նրան այդ ուղևորությունը, այնքան մտահոգ էր դառնում պառավի դեմքը:

– Սվերդլովսկում, որ ճիշտն ասեմ, կիջնեք...

– Ինչի՞:

– Պետք է: Էնտեղ ինձ ու քեզ հարցնող չկա: Կիջեցնեն ու վերջ:– Եգորը վճռեց, որ հիմա կարելի է և խմել:— Դե՞... Ճամփեքդ բարի:

– Խմի, էդ Սվերդլովսկում ինքներս պիտի խնդրե՞նք, որ իջացնեն, թե բոլորին կիջացնեն:

Եգորը խմեց, հաճույքով ճպացրեց, բեղերն ուղղեց:

– Բոլորին: Լավ գարեջուր ունես, Մալանյա Վասիլևնա: Էս ո՞նց սարքում: Կնկաս էլ սովորեցնեիր:

Տատը մի գավաթ էլ լցրեց:

– Ժլատություն թե չանեք, ձերն էլ լավը կլինի:

– Էդ ո՞նց,– չհասկացավ Եգորը:

– Շաքարը շատ արեք: Թե չէ ձեր ուզածն էն չի՞, որ համ էժան լինի, համ էլ թունդ: Մերանի շաքարը որ շատ անեք, գարեջուրն էլ լավ կլնի: Էլ չեմ ասում, որ թութունով թրմելն արդեն շատ ամոթ բան ա:

– Հա,— մտազբաղ ասաց Եգորը, բարձրացրեց գավաթը, նայեց տատին, Շուրկային, խմեց:– Հա-ա՛,— ասաց մի անգամ էլ:— Իհարկե, ինչ ճիշտն է, ճիշտը: Բայց Նովոսիբիրսկ որ հասաք, տեսեք, չսխալվեք:

– Ի՞նչը չսխալվենք:

– Էնպես... Ամեն ինչ կպատահի:— Եգորը հանեց թութունի քսակը, վառեց ծխախոտը, բեղի տակից ծխի մի վիթխարի, ճերմակ ամպ թողեց:— Կարևորն, ինչ ասեմ, Տոլմաչևո որ հասաք, տոմսարկղները չշփոթեք: Թե չէ մեկ էլ տեսար, թռաք Վլադիվոստոկ:

Տատն անհանգստացավ ու երրորդ անգամ լցրեց Եգորի զավաթը: Եգորն անմիջապես խմեց, ճպացրեց ու զարգացրեց իր միտքը.

— Պատահում է, որ մարդու մեկը մոտենում է արևելյան տոմսարկղին ու ասում. «Ինձ մի տոմս տվեք»: Բայց թե որտեղի՛ տոմս, չի ասում: Էդպես էլ խեղճ մարդը թռչում, լրիվ ուրիշ կողմ է գնում: Էնպես որ, տեսեք:

Տատը չորրորդ անգամ լցրեց գավաթը: Եգորը լրիվ թուլացավ: Խոսում էր հաճույքով:

— Ինքնաթիռով թռչելու համար ջղեր են պետք, ու էլի ջղեր: Ասենք, ինքնաթիռը բարձրանում է, քեզ իսկույն կոնֆետ են տալիս...

— Կոնֆե՞տ:

— Բա ո՞նց: Իբր, զբաղվիր, ուշք մի դարձնի... Բայց որ ճիշտն ասելու լինենք, ամենավտանգավոր տեղը դա է: Կամ էլ, օրինակ, քեզ ասում են. «Գոտիներով կապվիր»:— «Ինչի՞ համար»:— «Կարգն է էդպես»:— «Հէ՛... կարգը: Ճիշտն ասա՝ կարող է պատահի, շուռ գանք, ու վերջ: Թե չէ՝ կարգը»:

— Տե՛ր աստված, տե՛ր աստված,– ասաց տատը:— Էլ ինչի՞ են դրանով թռնում, որ էդպես ա...

– Է՛, միսն առանց ոսկոր չի լինում:– Եգորը նայեց գարեջրի ամանին:— Ընդհանրապես, ռեակտիվներն ավելի պինդ են: Իսկ պրոպելերովները կարող են ուզածդ րոպեին փչանալ, ու՝ խնդրեմ... Է՛լ որն ասեմ՝ էդ մոտորները շուտ-շուտ են վառվում: Մի անգամ Վլադիվոստոկից գալիս եմ, քեֆս էլ մի քիչ լավ...— Եգորն ավելի հարմար նստեց աթոռին, նոր ծխախոտ վառեց, մի անգամ էլ նայեց ամանին: Տատը տեղից չշարժվեց:— Ուրեմն էսպեսք գալիս ենք, լուսամուտից նայեմ դուրս՝ վառվում է...

— Սո՛ւրբ աստված, սո՛ւրբ աստված,– ասաց տատը:

Շուրկան նույնիսկ բերանը բաց արեց՝ լսում էր:

— Հա: Է՛, ես, իհարկե, բղավեցի: Օդաչուն վազելով եկավ... Է, ինչ ասեմ, ոչինչ մի լավ ուշունցի կապեց: Ի՞նչ ես հարայ-հրոցդ դրել, ասում է: Վառվում է, թող վառվի, քո բանը չի, դու նստիր... Դրանց ավիացիայի կարգն է էդպես:

Այս մեկը Շուրկային ճշմարտանման չթվաց: Նա սպասում էր, որ օդաչուն կրակը տեսնելուն պես, կփորձի հանգցնել արագությամբ կամ հարկադրված վայրէջք կկատարի, այնինչ հայհոյել է Եգորին: Տարօրինակ է:

— Մի բան չեմ հասկանում,— շարունակեց Եգորը, դիմելով Շուրկային,— ուղևորներին ինչի՞ չեն պարաշյուտ տալիս:

Շուրկան ուսերը թոթվեց: Նա չգիտեր, որ ուղևորներին պարաշյուտ չեն տալիս: Եթե այդպես է, իհարկե, տարօրինակ է:

Եգորը ծխախոտը խրեց ծաղկամանի մեջ, վեր կացավ, ինքն իր գավաթը լցրեց ամանից:

— Ի՛նչ գարեջուր ունես, է՛, Մալանյա:

— Շատ մի տաքանա՝ կհարբես:

— Գարեջուր հո չի...— Եգորը գլուխը տմբտմբացրեց ու խմեց: – Օ՛ֆֆ: Բայց ռեակտիվներն էլ են վտանգավոր: Սրանց մի բանը որ փչացավ, քարի պես ցած կընկնեն: Էլ պրծա՛ր... Ոսկորներդ էլ չի լինի հավաքել: Մարդուց մի երեք հարյուր գրամ բան մնաց--չմնաց: Շորերն էլ հետը:– Եգորը խոժոռվեց և ուշադիր նայեց ամանին: Տատն ամանն առավ ու տարավ հաշտ: Եգորը մի քիչ էլ նստեց, ապա վեր կացավ: Թեթևակի ճոճվում էր:

— Բայց դե չվախենաք,— բարձրաձայն ասաց նա:— Մենակ թե, ինչքան կարող եք, քթից հեռու նստեք, պոչի մոտ, ու թռեք: Է՛, գնացի...

Ծանրաքայլ մոտեցավ դռանը, կիսամուշտակը հագավ, գլխարկը դրեց:

— Բարևներս կտանեք Պավել Սերգեևիչին: Ի՞նչ գարեջուր ունես է՞, Մալանյա: Ոնց որ...

Տատը դժգոհ էր, որ Եգորն այդպես շուտ գինովցավ՝ մի կարգին չխոսեցին:

— Աչքիս մի տեսակ թուլացել ես, Եգոր:

– Հոգնել եմ, դրանից է:— Կիսամուշտակի օձիքի վրա ծղոտ կար՝ վերցրեց:— Մեր էս խելոքներին ասում էի. եկեք, խոտն ամառը տեղափոխենք՝ չէ՛: Հիմա էլ, էս բքից հետո, բոլոր ճամփեքը փակվել, էսօր ամբողջ օրը հոգիներս դուրս եկավ, հազիվ հասանք ամենամոտ դեզերին: Գարեջուրդ էլ հո գարեջուր չի...— Եգորը գլուխն օրորեց, ծիծաղեց:– Է, գնացի: Բան չկա, մի վախեք, թռեք գնացեք: Մենակ թե պոչի կողմը նստեք: Հաջողություն:

– Ցտեսություն,— ասաց Շուրկան:

Եգորը դուրս եկավ: Լսվեց, թե ինչպես զգուշորեն իջավ բարձր առմուտքից, բակով գնաց, դռնակը ճռռացնելով՝ փողոց ելավ ու ցածրաձայն երգեց.

Ծովն է ծփում հեռու- հեռու...

Եվ լռեց:

Տատը՝ մտազբաղ ու դառնացած, դուրս էր նայում մութ լուսամուտից: Շուրկան իր գրածն էր կարդում՝ Եգորի ասածները:

– Շուրկա, սիրտս ահ ընկավ,— ասաց տատը:

– Ուրիշները ո՞նց են թռչում...

– Գնացքով ավելի լավ չի՞:

– Գնացքով որ գնացինք, իմ արձակուրդը լրիվ ճանապարհի վրա կկորցնենք:

– Տեր աստված, տեր աստված,— հոգոց հանեց տատը:– Արի Պավելին նամակ գրենք: Հեռագիրն էլ հեչ անենք:

Շուրկան մի թերթ ևս պոկեց տետրից:

– Ուրեմն, չե՞նք թռչելու:

– Ո՞ւր թռնենք՝ մարդու զարզանդ ա գալիս, էն աստված: Հետո էլ երեք հարյուր գրամ կհավաքեն...

Շուրկան մտքերի մեջ ընկավ:

– Գրի. թանկագին որդի Պաշա, իմացող մարդկանց հետ էստեղ խորհուրդ արեցի...

Շուրկան գլուխը կախեց:

– Պատմեցին, թե ոնց են թռնում էդ ինքնաթիռներով... Ու Շուրկայի հետ որոշեցինք, որ ամառը գնացքով կգանք: Ճիշտն ասած, հիմի էլ կլիներ, բայց դե Շուրկայի արձակուրդը շատ ա կարճ...

Շուրկան մեկ-՝երկու վայրկյան հապաղեց ու շարունակեց գրել.

«Իսկ հիմա, քեռի Պաշա, ես եմ գրում, իմ կողմից: Տատին վախեցրեց Եգոր Լիզունովը, մեր տնտեսվարը, թե որ հիշում եք: Նա, օրինակ, այսպիսի մի փաստ բերեց, իբր, լուսամուտից նայել է դուրս ու տեսել, որ մոտորը վառվում է: Եթե այդպես լիներ, օդաչուն կսկսեր կրակն արագությամբ հանգցնել, ինչպես սովորաբար անում են: Ես կարծում եմ, որ նա տեսել է արտամղող խողովակի բոցն ու խուճապ բարձրացրել: Խնդրում եմ, տատին գրեք, որ դա սարսափելի չէ, բայց իմ մասին, որ ես եմ ձեզ գրել, բան չասեք: Թե չէ ամռանն էլ չի գա: Կսկսի հողամասով զբաղվել, իր խոզերով, հավերով ու բադերով, սպանես՝ տեղ չի գնա: Չէ՞ որ մենք դեռ գյուղացի ենք: Իսկ ես շատ-շատ եմ ուզում Մոսկվան տեսնել: Պատմությունից և աշխարհագրությունից դպրոցում անցնում ենք, բայց դա, ինքներդ գիտեք, այն չէ: Քեռի Եգորը նաև ասաց, որ, օրինակ, ուղևորներին պարաշյուտ չեն տալիս: Սա արդեն շանտաժ է: Բայց տատը հավատում է: Քեռի Պաշա, խնդրում եմ, ասեք, որ ամոթ է: Նա ձեզ շատ է սիրում: Ուրեմն ասեք նրան, սա ի՞նչ բան է, մամա, տղադ՝ օդաչու, Սովետական Միության հերոս, լիքը շքանշաններ ունի, իսկ դու վախենում ես թռչել մի սովորական քաղաքացիական ինքնաթիռով: Եվ դեռ այն դեպքում, երբ մենք արդեն հաղթահարել ենք ձայնային պատնեշը: Այդպես որ գրեք, անմիջապես կթռչի: Չէ՞ որ նա շատ է հպարտանում ձեզանով: Իհարկե, տեղին է հպարտանում: Ես անձամբ նույնպես հպարտանում եմ: Բայց և շատ-շատ եմ ուզում Մոսկվան տեսնել: Դե, առայժմ, ցտեսություն: Ողջույններով՝ Ալեքսանդր»:

Մինչդեռ տատը թելադրում էր.

... Աշնան գլուխ կգանք: Սունկն էլ արդեն կլինի, մսից բանից էլ աղ դրած կլինենք, մուրաբա էլ եփած կլինենք: Մոսկվայում ամեն բան խանութից եք առնում, չէ՞: Մեկ էլ՝ նրանք էնպես կսարքե՞ն, ոնց որ ես, մեր տնական ձևով: Էսպես բաներ, որդի: Բարևիր կնոջդ ու էրեխեքին իմ ու Շուրկայի կողմից: Վերջ: Գրեցի՞ր:

– Գրեցի:

Տատը վերցրեց թուղթը, ծալեց, ծրարը դրեց ու հասցեն ինքը գրեց:

«Մոսկվա, Լենինսկի պողոտա, տ. 78, բն. 156
Սովետական Միության հերոս Պավել Իգնատևիչ Լյուբավինին:
Սիբիրից, իր մորից»:

Հասցեն միշտ ինքն էր գրում, գիտեր, որ այդպես հաստատ կհասնի:

– Էսպես: Շուրկա, քիթդ մի կախի: Ամառը կգնանք:

— Չեմ կախում: Բայց դու կամաց-կամաց պատրաստվիր, մեկ էլ տեսար, մտքիդ դրեցիր թռչել:

Տատը նայեց թոռանն ու ոչինչ չասաց:

Գիշերը Շուրկան լսում էր, թե նա ինչպես է շուռումուռ գալիս վառարանի վրա, կամացուկ հոգոց հանում ու ինչ-որ բան շշնջում:

Շուրկան նույնպես քնած չէր: Մտածում էր: Արտասովոր շատ բան էր խոստանում կյանքը մոտ ապագայում: Նման բան նույնիսկ չէր էլ երազել երբեք:

— Շո՛ւրկ,— ձայն տվեց տատը:

– Հը՞:

– Պավելին, ով գիտի, Կրեմլ են թողնում, չէ՞:

– Երևի: Ինչի՞ որ:

— Գոնե մի անգամ մարդ գնար... տեսներ:

— Հիմա այնտեղ բոլորին էլ թողնում են:

Տատը որոշ ժամանակ լուռ էր.

— Չէ հա՛, ում ասես՝ թողին,– կասկածելով ասաց տատը:

– Նիկոլայ Վասիլևիչն է մեզ պատմել:

Մի րոպեի չափ էլ լուռ մնացին:

— Դու էլ ես հետաքրքիր, հա՜, տատ, տեղը որ եկավ՝ չես վախենա, իսկ հիմա՞ ինչից վախեցար,— դժգոհ ասաց Շուրկան:— Ինչի՞ց վախեցար:

— Քնի, քնի,— հրամայեց տատը:— Քաջիս տեսեք: Առաջինն ինքդ շալվարդ կլցնես:

— Գրազ գա՞նք, որ չեմ վախենա:

— Քնի, քնի: Թե չէ էգուց էլի դասից կուշանաս:

Շուրկան սսկվեց: